

Հաստատված է  
 01. 09. 2022թ.  
 Ամբիոնի 1-ին նիստում  
 (արձ. թիվ 1 ) ամբիոնի պետ՝  
 .....  
 (ստորագրություն)  
 .....  
 (ամիս ամսաթիվ)

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Հայոց լեզու և հայ գրականություն/իրավագիտ./
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՀՀ ոստ. կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Լեզուների ամբիոն <a href="mailto:lezneriambion@mail.ru">lezneriambion@mail.ru</a>
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Պայմանագրային դասախոս, ոստ. գնդապետ Ռ. Մուսայելյան, 077085757
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2022-2023ուստարվա բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 96 ժամ, որից 42 ժամ նախատեսվում է 1-ին կիսամյակի, իսկ 54 ժամ՝ երկրորդ կիսամյակի համար: Դասընթացն ավարտվում է քննությունով:

<b>ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</b>	<p>Դասընթացը կառուցվում է դպրոցի հայոց լեզվից և գրականությունից ունեցած գիտելիքների իմացության վրա:</p>
<b>ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	<p>Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բլոկների տեսքով`</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հայոց լեզվի տեղն ու դերը համաշխարհային լեզուների շարքում: Հայոց լեզվի ծագումը և զարգացման շրջափուլերը:</li> <li>• Գրական լեզվի երկու տարբերակները` արևելահայ գրական լեզու և արևմտահայ գրական լեզու: Գրական լեզու և բարբառներ:</li> <li>• Հնչյունաբանություն: Առարկան և խնդիրները:</li> <li>• Բառագիտություն. բառապաշար, քրեական աշխարհի ժարգոն, բառակազմություն և իմաստաբանություն</li> <li>• Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը:</li> <li>• Շարահյուսություն. նախադասությունների տեսակները::</li> <li>• Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ:</li> <li>• Ուրիշի խոսք: Ուղղակի խոսքի տեսակները:</li> <li>• Կետադրություն:</li> <li>• Վարչա-գործարարական ոճի առանձնահատկությունները:</li> <li>• Գործնական գրություններ:</li> <li>• Մասնագիտական տերմիններ/եզրեր/:</li> <li>• Հայ միջնադարի գրականություն/5-րդ- 18-րդ դար./:</li> </ul>
<b>ՆՊԱՏԱԿ</b>                          <b>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</b>	<p>Դասընթացի հիմնական նպատակն է`</p> <p>Սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ հնչյունաբանության, բառագիտության և քերականության վերաբերյալ: Ներկայացնել միջնադարի մեծություններին` սկսած հայ պատմիչներից` Ագաթանգեղոս, Բյուզանդ, Ղ. Փարպեցի, Մ. Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Ներսես Շնորհալի, Մխիթար Գոշ, Ֆրիկ, Նահապետ Քուչակ, Մայաթ- Նովա:</p> <p>Դասընթացի խնդիրներն են`</p> <ul style="list-style-type: none"> <li>• ճանաչել ժամանակակից հայոց գրական լեզվի օրինաչափություններն ու առանձնահատկությունները,</li> <li>• արժևորել հայոց լեզվի դերն ու նշանակությունը ոստիկանության աշխատանքում:</li> </ul>
<b>ԿՐԹԱԿԱՆ ԵՂՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>  <b>1. Իմանա</b>	<p>Սովորողները պետք է իմանան`</p> <ul style="list-style-type: none"> <li>• հայերենի ուղղագրական, կետադրական կանոնները,</li> </ul>

<p>2. Կարողանա</p>	<ul style="list-style-type: none"> <li>• գործնական գրությունները, իրավաբանական և գրականագիտական տերմինները,</li> <li>• մասնագիտական խոսք կառուցելու հմտությունները:</li> </ul> <p>Սովորողները պետք է կարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• կապակցված խոսք կազմել,</li> <li>• լեզվական և գրականագիտական գիտելիքները կիրառել ուստիկանական համակարգում:</li> </ul>
<p>3. Տիրապետի</p>	<p>Սովորողները պետք է տիրապետեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ուղղագրության և կետադրության սկզբունքներին,</li> <li>• գործնական գրությունների կազմմանը և դրանց կիրառությանը ուստիկանանան ծառայությունում:</li> </ul>

<p><b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b></p>	
<p><b>Հիմնական</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Բարսեղյան Հ., Ուղղագրական-ուղղախոսական-տեղեկատվական բառարան, Ե., 1973:</li> <li>2. Դավթյան Յու., Ժամանակակից հայերենի կետադրության ինքնուսույց, Ե., 2010:</li> <li>3. Դավթյան Յու., Հայերենի ուսուցման հարցեր, Ե., 2014:</li> <li>4. Դավթյան Յու., Նախադասության վերլուծություն և զծապատկերներ, Ե., 2015:</li> <li>5.Մուսայելյան Ռ., Հայոց լեզու, Ե. 2013:</li> <li>6.Աղաջանյան Զ.,Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007</li> <li>7.«Մեր մեծերը» շարքից՝ Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, «Սասունցի Դավիթ» Էպոսը, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի,</li> </ol>

	Մխիթար Գոշ, Նահապետ Քուչակ/համակարգչ./:
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> <li>1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2004:</li> <li>2. Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 1989:</li> <li>3. Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 1987:</li> <li>4. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե. 1999:</li> <li>5. Եզեկյան Լ. Հայոց լեզու,</li> <li>6. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք,</li> </ol>

<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ</b>		
<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ</b>	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
	18-20	Գերազանց
	13-17	Լավ
	8-12	Բավարար
	0-7	Անբավարար
	0	Չներկայացած/չի ներկայացրել
	Ստուգարքային գնահատում	Ստուգված/չստուգված
<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ /</b>		

<b>ՄԵՌԱՆԻՉՄՆԵՐ</b>	
<b>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
<b>Ներկայություն</b>  <b>Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ</b>  <b>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</b>	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
	Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

ՕՐ/ՇԱ ԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
<p>1-ին շաբաթ</p> <p>1</p>	<p>Ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, պետական և գրական լեզու: Հայերենը և աշխարհի լեզուները: Հայերենի տեղը լեզուների համակարգում:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• հարցուպատասխան</li> <li>• բանավեճ-քննարկում</li> </ul> <p><b>Նպատակը`</b> սովորողներին գաղափար տալ հայոց լեզվի մասին, ներկայացնել հայոց լեզվի դերն ու նշանակությունը ուստիկանության աշխատանքում:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, գրական և պետական լեզու:</p> <p>բ) հայերենը և աշխարհի լեզուները, հայերենն իբրև հնդեվրոպական լեզու:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Անգիր սովորել Համո Սահյանի «Մեր լեզուն» ստեղծագործությունը, քննարկել և կատարել դատողություններ:</p> <p>Համաշխարհային մեծերը հայոց լեզվի մասին:</p> <p>Ժողովրդական ասացվածքներ լեզվի մասին:</p>	<p><b>Սովորողը գիտի, թե ինչ է լեզուն և ինչ նշանակություն ունի այն հասարակության կյանքում:</b></p> <p><b>Սովորողը ճանաչում է լեզվաընտանիքները և գիտի հայերենի տեղը աշխարհի լեզուների համակարգում:</b></p>
<p>2-րդ շաբաթ</p>	<p>Հայոց լեզվի զարգացման շրջափուլերը. գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար:</p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ հայոց լեզվի նախագրային և գրային էտապների մասին: Ներկայացնել մեր լեզվի գրային շրջանը` իր</p>	<p>Լսարանային բանավեճ, թեմա` «Հայոց լեզու, դու մեր անկողնապտելի գանձը եղար... »:</p> <p>Գործնական գրություն.</p> <p><b>Ինքնակենսագրություն:</b></p> <p>Ուղղագրական և կետադրական</p>	<p><b>Մավարողը գիտի հայոց լեզվի ծագման պատմությունը, նրա նախագրային և գրային շրջանները, գրաբարի կարևոր գործառույթները:</b></p> <p><b>Կարողանում է սխեմայով ներկայացնել հայոց լեզվի զարգացման ողջ ընթացքը:</b></p>

2	<b>Գործնական պարապմունք/2 ժամ /</b>	<p>զարգացման երեք փուլերով:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) Նախագրային շրջան/ վաղնջական և հնագույն/,  բ) հին կամ գրաբար/ գրաբարի կարևոր գործառնությունները/,  գ) միջին հայերեն կամ կիլիկիո հայերեն,  դ)նոր կամ աշխարհաբար:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>առաջադրանքներ:</p>	<p>:</p>
<p>2-րդ շաբաթ</p> <p>3</p>	<p>Ալեկախայ և արևմտահայ գրական լեզուներ: Գրական լեզու և բարբառներ:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• դասախոսություն (ավանդական):</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների, կրանց հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունների մասին:</p> <p>Ներկայացնել չորս բարբառաձյուղերը և մոտ 60 բարբառները՝ որպես հայոց լեզվի տարատեսակներ:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) գրական լեզուն գրավոր և բանավոր</p>	<p>Ուղղագրական առաջադրանքներ:</p> <p>Կարդալ Միսաք Մեծարենցի «Աքսախաներուն շուքին տակ» ստեղծագործությունը և փորձել դարձնել արևելահայերեն:</p>	<p><b>Մովորողը գիտի գրական լեզվի և բարբառի սահմանումները և նրանց առանձնահատկությունները:</b></p> <p><b>Կարողանում է տարբերել արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունային, բառային և քերականական առանձնահատկությունները:</b></p>

		<p>հաղորդակցության միջոց,</p> <p>բ) արևմտահայերենը սփյուռքահայության լեզու,</p> <p>գ) բարբառը բանավոր հաղորդակցության միջոց:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		
<p><b>3-րդ շաբաթ</b></p> <p><b>4</b></p>	<p>Ժամանակակից հայոց լեզվի դասընթացի բաժինները՝ հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, ոճաբանություն:</p> <p><b>Հնչյունաբանություն:</b></p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ հայոց լեզվի հնչյունական համակարգի և նրա առանձնահատկությունների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) հնչյունաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները,</p> <p>բ) հնչյունի սահմանումը,</p> <p>գ) <b>հնչյուն</b> և տառ,</p> <p>դ) հնչյունների դասակարգումը. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Ուղղագրական առաջադրանքներ:</p> <p>Լսարանային բանավեճ, թեմա՝ «Իմ սո՛ւրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես»:</p> <p>Նժդեհյան մտքեր հայրենասիրության մասին:</p>	<p><b>Մովորողը գիտի ժամանակակից հայոց լեզվի դասընթացի բաժինները, հնչյունաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները, գիտի հնչյունի սահմանումը:</b></p> <p><b>Մովորողը գիտի՝ ինչ է շեշտը և նրահետ կապված հնչյունափոխությունը, կարողանում է դասակարգել հնչյուններն ըստ ձայնի պարունակության:</b></p>



<p>4-րդ շաբաթ</p> <p>5</p>	<p>Հայոց լեզվի այբուբենը: Այբուբենի թվային արժեքը:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• ինտերակտիվ գրույց:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ գրերի գյուտի, հայոց այբուբենի, նրա մասնակի փոփոխությունների մասին: Ներկայացնել այբուբենի թվային արժեքը:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերը,</p> <p>բ) ոսկեդարի մշակույթը,</p> <p>գ) այբուբենի թվային արժեքը և կիրառությունը:</p> <p>դ) Հայոց այբուբենը և Մենդելեևի պարբերական աղյուսակը:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Կարդալ հատված Պ. Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմից:</p> <p>Թեմայից բխող այլ վարժություններ:</p>	<p><b>Սովորողը գիտի գրերի գյուտի պատմությունը, Մեսրոպ Մաշտոցի մեծ առաքելությունը, ճանաչում է 5-րդ դարի դպրության երախտավորներին:</b></p> <p>Կարողանում է ներկայացնել այբուբենի թվային արժեքը և օգտվել դրանից:</p>
<p>4-րդ շաբաթ</p> <p>6</p>	<p>Բառագիտություն. ուսումնասիրության առարկան, խնդիրները, բաժինները: Բառի սահմանումը: Տերմին և տերմինաբանություն:</p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն,</li> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ բառագիտության ուսումնասիրության առարկայի, խնդիրների, բաժինների մասին: Ներկայացնել տերմինը՝</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Մեր պատմության խոսուն վկաները.</p> <p>պատմամշակութային որևէ հուշարձանի մասին ներկայացնել գրավոր աշխատանքի տեսքով:</p>	<p><b>Գիտի բառի և տերմինի սահմանումը, բառագիտության ուսումնասիրության առարկան և նրա խնդիրները: Սովորողը կարողանում է տարբերել տերմինները սովորական բառերից, թվարկում է տերմինի առանձնահատկությունները:</b></p>

	<p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p>որպես հատուկ գործաձեռնության բառեր:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) բառագիտության ուսունմնասիրության առարկան, խնդիրները և բաժինները,</p> <p>բ)բառի սահմանումը,</p> <p>գ)տերմինի առանձնահատկությունները:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		
<p>5-րդ շաբաթ</p> <p>7</p>	<p>Բառապաշար. դասակարգումը, շերտերը:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ բառապաշարի, նրա դասակարգման և շերտերի մասին: Ներկայացնել բառապաշարի փոփոխությունները:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) ակտիվ և պասիվ բառապաշար,</p> <p>բ) հնարանություններ և պատմաբառեր,</p> <p>գ) բառաշինություն և բառապատճենում,</p> <p>դ) փոխառությունների տեսակները,</p> <p>ե) օտարաբանություններ և նորաբանություններ:</p>	<p>Թեմայիս բխող վարժություններ.</p> <p>Է. Աղայանի բացատրական բառարանից դուրս գրել հնարանություններ:</p> <p>Կազմել նորաբանությունների բառարան:</p>	<p><b>Մոլորողները գիտեն բառապաշարի սահմանումը, ճանաչում են բառապաշարի շերտերը, գիտեն հարստացման ուղիները բառաշինություն և փոխառություն:</b></p> <p><b>Մոլորողները կարողանում են տարբերել նորաբանությունները և օտարաբանությունները, հնարանությունները և պատմաբառերը:</b></p>

		<b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		
<b>6-րդ շաբաթ</b>  <b>8</b>	Բառիմաստ. բառի հիմնական, երկրորդական և փոխաբերական իմաստներ: Մենիմաստ և բազմիմաստ բառեր:  <b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b>	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <b>Նպատակը`</b> գաղափար տալ բառիմաստի տեսակների, բառերի հիմնական, երկրորդական և փոխաբերական իմաստների, մենիմաստ և բազմիմաստ բառերի մասին:  <b>Քննարկվող հարցերը`</b> ա) բառիմաստի տեսակները, բ) բառերի հիմնական և երկրորդական իմաստներ, գ) բառերի փոխաբերական իմաստները, դ) մենիմաստ և բազմիմաստ բառեր:  <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>	Թեմայից բխող վարժություններ:  Լսարանային բանավեճ, թեմա` «Բարին և չարը»: Հորինել որևէ պատմվածք վերոհիշյալ թեմայով:	<b>Մովորող ճանաչում է բառագիտության երկու ենթաբաժինները` իմաստաբանություն և բառագիտություն, գիտի իմաստաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները, կարողանում է տարբերել մենիմաստ և բազմիմաստ բառերը, բառի հիմնական և փոխաբերական իմաստները:</b>

<p><b>6-րդ շաբաթ</b></p> <p>9</p>	<p>Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>մտազրոհ,</li> <li>բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ ըստ ձևի և ըստ իմաստի բառերի տեսակների՝ հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցեր՝</b></p> <p>ա) հոմանիշներ,</p> <p>բ) հականիշներ,</p> <p>գ) համանուններ,</p> <p>դ) հարանուններ:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Գրել առաձևեր և ասացվածքներ՝ օգտագործելով համանուններ, հարանուններ և հականիշներ:</p> <p><b>Հարանուն</b> բառազույգերով կազմել նախադասություններ, բացատրել իմաստային տարբերությունները:</p>	<p><b>Մովորողը կարողանում է դասակարգել բառերն ըստ իմաստի և ձևի, կարողանում է մասնագիտական խոսք կառուցելու համար կատարել հոմանիշների, հարանունների ճիշտ ընտրություն՝ ելնելով պաշտոնական ոճի առանձնահատկություններից:</b></p>
<p><b>7-րդ շաբաթ</b></p> <p>10</p>	<p>Բառերի տեսակներն ըստ կազմության/պարզ, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր բառեր/:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>հարցուպատասխան</li> <li>բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ ըստ կազմության բառերի տեսակների, բառակազմական բաղադրիչների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) բառակազմական բաղադրիչներ՝ արմատ և ածանց,</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Գործնական գրություն. <b>ՋԵԿՈՒՑԱԳԻՐ</b></p>	<p><b>Մովորողը գիտի, թե ինչ է ուսումնասիրում բառակազմությունը՝ որպես բառագիտության բաժին, ճանաչում է բառակազմական բաղադրիչները, կարողանում է բառերը երթարկել բառակազմական վերլուծության:</b></p>

		բ)պարզ և ածանցավոր բառեր, գ)բարդ և բարդ ածանցավոր բառեր: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		
<b>8-րդ շաբաթ</b>	Բարդության տեսակները: Հապավական բարդություններ:	<b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul> <b>Նպատակը՝</b> գաղափար տալ բարդ բառերի տեսակների մասին: <b>Քննարկվող հարցերը՝</b> ա)վերլուծական բարդություններ, բ)համադրական բարդություններ, գ)հապավումներ և համառոտագրություն: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>	Գրել տասը նորագույն հապավումներ:  Տառային հապավումների բառարան-տեղեկատուից դուրս գրել իրավագիտության հետ առնչվող հապավումներ:	<b>Մովորողները ճանաչում են բարդության տեսակները, գիտեն հապավական բարդության սահմանումը, կարողանում են ճիշտ գրել տառային հապավումները:</b>
11	<b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b>			
<b>8-րդ շաբաթ</b>	Ձևաբանություն. ուսումնասիրության առարկան: Խոսքի մասերի դասակարգումը. գոյական անուն:	<b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <b>Նպատակը՝</b> գաղափար տալ ձևաբանության ուսումնասիրության առարկայի, խոսքի մասերի, դասակարգման սկզբունքների, գոյականի քերականական կարգերի մասին:	Կազմել տոհմաճառ:  Գրել շարադրություն, թեմա՝ «Ես հավատարիմ եմ իմ արմատներին»:	<b>Մովորողը գիտի՝ ինչ է ուսումնասիրում ձևաբանությունը՝ որպես քերականության ենթաբաժին, հասկանում է խոսքի մասերի դասակարգման սկզբունքը, կարողանում է տարբերել գոյականը որպես խոսքի մաս:</b>
12				

	<p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) ձևաբանության ուսումնասիրության առարկան,</p> <p>բ) խոսքի մասերի դասակարգման սկզբունքները,</p> <p>գ) գոյականի քերականական կարգերը:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		
<p><b>9-րդ շաբաթ</b></p> <p><b>13</b></p>	<p>Հատուկ և հասարակ գոյականներ:</p> <p>Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:</p> <p><b>Գործնական պարապմունքներ /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ հատուկ և հասարակ գոյականների մասին, ներկայացնել բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) Հատուկ անուններ, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով,</p> <p>բ) հատուկ անուններ, որոնց առաջին բաղադրիչները գրվում են մեծատառով,</p> <p>գ) հատուկ անուններից առաջացած հասարակ անուններ:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Գործնական զրույթուն. <b>Դ Ի Մ ՈՒ Մ</b></p>	<p><b>Մոլորողները առանձնացնում են հատուկ և հասարակ գոյականները, գիտեն սահմանումները, տիրապետում են բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությանը;</b></p>

<p><b>10-րդ շաբաթ</b></p> <p>14</p>	<p>Գոյականի թվի քերականական կարգը: Անհոգնական, անեզական և հավաքական գոյականներ:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ գոյականի հոգնակի թվի, նրա կազմության, հոգնակիակերտ վերջավորությունների մասին:Ներկայացնել անհոգնական, անեզական և հավաքական իմաստ ունեցող գոյականները:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) միավանկ գոյականների հոգնակի թվի կազմությունը,</p> <p>բ)բազմավանկ գոյականների հոգնակի թվի կազմությունը,</p> <p>գ)բարդ բառերի հոգնակի թվի կազմությունը,</p> <p>դ)անհոգնական գոյականներ,</p> <p>ե)անեզական գոյականներ,</p> <p>զ)հավաքական գոյականներ:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p><b>Իմ «Նա»-ի քարտեզը</b></p> <p>Թեմայից բխող վարժություններ</p>	<p><b>Մովորողը գիտի՝ որոնք են անհոգնական, անեզական և հավաքական գոյականները, կարողանում են խոսքի մեջ ճիշտ գործածել դրանք:</b></p>
<p><b>10-րդ շաբաթ</b></p>	<p>Գոյականի հոգնակի թվի կազմությունը. հոգնակիակերտ վերջավորություններ:</p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• դասախոսություն (ավանդական),</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul>	<p>Թեմայից բխող վարժություններ</p> <p>Պ. Սևակի «Ծնվել եմ» բանաստեղծությունը սովորել անգիր:</p>	<p><b>Մովորողները ճանաչում են եզակի և հոգնակի գոյականները, գիտեն հոգնակի թվի կազմության կանոնները, բացառությունները, կարողանում են ճիշտ կազմել</b></p>

15	<b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b>	<b>Քննարկվող հարցերը`</b> ա) միավանկ գոյականների հոգնակի թվի կազմությունը, բ)բազմավանկ գոյականների հոգնակի թվի կազմությունը, գ)բարդ բառերի հոգնակի թվի կազմությունը, դ)անհոգնական գոյականներ, ե)անեզական գոյականներ, զ)հավաքական գոյականներ: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		<b>գոյականների հոգնակի թիվը:</b>
11-րդ շաբաթ	Ածական անուն. որակական և հարաբերական ածականներ: Ածականի գործածությունը:	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• բացատրում,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <b>Նպատակը`</b> ընդհանուր գաղափար տալ ածականների մասին: <b>Քննարկվող հարցերը`</b> ա) որակական ածականներ, բ) հարաբերական ածականներ, գ) որակական ածականների առանձնահատկությունները, դ)որակական ածականի համեմատության	Գրել կայուն բառակապակցություններ, որոնց առաջին բաղադրիչները ածականներ են:	<b>Մոլորողը տարբերում է որակական և հարաբերական ածականները, թվարկում է որակական ածականի տարբերիչ առանձնահատկությունները, կարողանում է ճիշտ գրել և խոսքի մեջ ճիշտ գործածել ածականները տարբեր քերականական պաշտոններով:</b>
16	<b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b>			



		<p>աստիճանները:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		
<p>12-րդ շաբաթ</p> <p>17</p>	<p>Թվական անուն, տեսակները, կազմությունը և ուղղագրությունը:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> ընդհանուր գաղափար տալ թվականի մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) քանակական թվականներ, նրանց տեսակները,</p> <p>բ) դասական թվականներ,</p> <p>գ) թվականների կազմությունը և ուղղագրությունը:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Գրել կայուն բառակապակցություններ, որոնց առաջին բաղադրիչը թվական է:</p> <p>Գործնական գրություն. <b>Բնութագիր</b></p>	<p><b>Սովորողը ճանաչում է թվականները, գիտի նրա տեսակները, կազմությունը, արտահայտության ձևերը, կարողանում է ճիշտ գրել և ճիշտ գործածել:</b></p>
<p>12-րդ շաբաթ</p>	<p>Դերանուն, տեսակները և առանձնահատկությունները:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• բանավեճ-քննարկում,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ դերանվան և նրա առանձնահատկությունների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցեր՝</b></p> <p>ա) ընդհանուր գաղափար դերանվան մասին,</p> <p>բ) դերանվան տեսակները և նրանց</p>	<p>Անգիր սովորել Պ. Սևակի «Դու» բանաստեղծությունը:</p> <p>Թեմայից բխող վարժություններ:</p>	<p><b>Սովորողը գիտի դերանվան սահմանումը, քերականական առանձնահատկությունները, ճանաչում է նրա յոթ տեսակները և ոճական արժեքը:</b></p> <p><b>Կարողանում է նախադասության վերլուծության ժամանակ ճիշտ</b></p>

18		<p>առանձնահատկությունները:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		<p>ներկայացնել դերանունների քերականական հատկանիշները:</p>
13-րդ շաբաթ	<p>Դերանունների հոլովումը:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը`</b> ներկայացնել դերանունների հոլովումը:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) անվանական հոլովում,</p> <p>բ) դերանվանական հոլովում:</p> <p>գ)ձևաբանական- ոճական զուգաձևություններ</p> <p>դ)ձևաբանական-շարահյուսական զուգաձևություններ</p> <p>բառային-ձևաբանական զուգաձևություններ(էս, էր, են,էսպես, էդպես, էնպես, ինչպես-ոնց, ինչի-ինչու, այլք-այլոք և այլն)</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Բանավեճի թեմա` «Իմ մանկության քաղցր հուշեր»:</p> <p>Քո մանկության չարաճճիություններից: Չարաճճիություն և զանցանք</p>	<p><b>Մովորողը գիտի դերանունների հոլովման առանձնահատկությունները: Կարողանում է տարբերել անվանական և դերանվանական հոլովումները, ձևաբանական- ոճական, ձևաբանական-շարահյուսական, բառային-ձևաբանական զուգաձևություններից կարողանում է առանձնացնել ճիշտ տարբերակները:</b></p>
14-րդ շաբաթ	<p>Բայ. ընդհանուր գաղափար բայի մասին:</p> <p><b>Դերբայներ</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ բայի</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Նախադասությունների վերլուծություն ձևաբանորեն:</p>	<p><b>Մովորողը գիտի բայի տեսակները, ձևաբանական առանձնահատկությունները և</b></p>

20	<p><b>Գործնական պարապմունք/2 ժամ /</b></p>	<p>քերականական կարգերի և առանձնահատկությունների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) ընդհանուր գաղափար բայի մասին,</p> <p>բ) անդեմ և եղանակային ձևեր,</p> <p>գ) դերբայներ/անկախ դերբայներ և ձևաբայեր/:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		<p><b>շարահյուսական դերը:</b></p> <p><b>Կարողանում է տարբերել դիմավոր և անդեմ ձևերը, ձևաբայերը և անկախ դերբայները:</b></p>
<p><b>14-րդ շաբաթ</b></p> <p>21</p>	<p>Բայի եղանակները. սահմանական եղանակ:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b></p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• դասախոսություն (պասիվ)</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ բայի եղանակի մասին: Ներկայացնել սահմանական եղանակի ժամանակաձևերը:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) եղանակը որպես բայի յուրահատուկ քերականական կարգ,</p> <p>բ)սահմանական եղանակի ժամանակաձևերը, և նրանց կազմությունը,</p> <p>գ) բայի յուրահատուկ թեթումը` խոնարհում/ դրական և ժխտական/:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Նախադասության վերլուծություն ձևաբանորեն:</p>	<p><b>Մովորողը գիտի սահմանական եղանակի ժամանակաձևերը` իրենց անուններով, կարողանում է խոնարհել բայը սահմանական եղանակի յոթ ժամանակաձևերով:</b></p>

<p><b>2-րդ կիսամ. 1-ին շաբաթ</b></p> <p><b>1</b></p>	<p>Բայի եղանակները: Զուգաձևությունները եղանակային ենթահամակարգում:  <b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> <b>Քննարկվող հարցեր՝</b> ա)դերբայական զուգաձևություններ բ)եղանակային զուգաձևություններ գ)զուգաձևություններ ժխտական խոնարհման համակարգում</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Մարդու արտաքին նկարագիրը:Առավել անհատականացնող գծեր:</p>	<p>Մովորողները ճանաչում են բայի եղանակները, գիտեն ժամանակաձևերը և կազմությունը, կարողանում են խոնարհել բայերը բոլոր եղանակներով:Կարողանում են եղանակային ենթահամակարգում գտնել և խոսքի մեջ ճիշտ կիրառել բայերը:</p>
<p><b>2-րդ շաբաթ</b></p> <p><b>2</b></p>	<p>Անկանոն և պակասավոր բայեր: Զուգաձևություններն անկանոն բայերի մանրահամակարգում:  <b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն(պասիվ),</li> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> Գաղափար տալ անկանոն և պակասավոր բայերի մասին: Բացատրել զուգաձևություններն անկանոն բայերի մանրահամակարգում: Մովորեցնել առանձնացնել ճիշտ և սխալ ձևերը:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b> ա)անկանոն բայերը ժամակակալից արելահայ գրական լեզվում(շուրջ 20բայ ուտել, վեր կենալ, ելնել,տեսնել,ասել,առնել, բերել, բանալ,զարկել, բառնալ,դնել,անել,տանել,լվանալ,թողնել,դառնալ,լինել,գալ,լալ,տալ) բ)հիմքի փոփոխություն չկրող գ)այլաբուն անկանոն բայեր դ)տարարմատ անկանոն բայեր</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Անգիր սովորել Պ. Սևակի «Մի պահ զոջում եմ» ստեղծագործությունը, դուրս գրել բայերը, որոշել եղանակը և սեռը:</p>	<p>Մովորողները ճանաչում են անկանոն բայերը: Գիտեն անկանոն և պակասավոր բայերի առանձնահատկությունները: Խոսքի մեջ կարողանում են ճիշտ կիրառել անկանոն և պակասավոր բայերը:</p>

<p><b>2-րդ շաբաթ</b></p> <p>3</p>	<p>Հայ գրականության սկզբնավորումը 5-րդ դարում: Հայ հին պատմագրությունը:</p> <p><b>Գործնական աշխատանք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն(պասիվ)</li> <li>• քննարկում</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> սովորողներին գաղափար տալ 5-րդ դարի դպրության մասին: Ներկայացնել պատմագրության լեզվական նյութը, պատմագրության յուրահատկությունները և արժանիքները:</p> <p><b>Քննարկվող հարցեր՝</b></p> <p>ա)հայկական գրերի ազդեցությունը պատմագրության, վարքագրության և թարգմանչական գրականության ձևավորման և հետագա զարգացման վրա:</p> <p>բ)հայ պատմագրությունը որպես սկզբնաղբյուր:</p>	<p>Կարդալ Հ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» բանաստեղծությունը:</p>	<p><b>Սովորողները գիտեն գրաբարի երեք կարևոր գործառությունները՝ պատմագրության լեզու, գիտության լեզու, կրոնական լեզու: Գիտեն հայ պատմիչներին, նրանց գործերը, առանձնահատկությունները և գեղարվեստական արժեքը: Կրողանում են գնահատել պատմիչներին՝ ըստ նրանց թողած գրական ժառանգության:</b></p>
<p><b>3-րդ շաբաթ</b></p> <p>4</p>	<p>Մակբայ. տեսակները, կազմությունը և կիրառությունը:</p> <p><b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• հարցուպատասխան,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> սովորողներին գաղափար տալ մակբայի և նրա տեսակների մասին, բացատրել մակբայների կազմությունը և ուղղագրությունը:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա)մակբայի տեսակները, բ)ընդհանրական մակբայներ, գ)մակբայների կազմությունը և կիրառությունը, դ)ձևաբանական-ուղղագրական գույքաձևություններ:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Գործնական գրություն՝ <b>Նամակ:</b></p> <p>Կարդալ Չառլի Չապլինի մտերմական նամակը՝ հասցեագրված դստերը:</p> <p>Կարդալ Աբրահամ Լինքոլնի նամակը՝ հասցեագրված որդու ուսուցչին:</p>	<p><b>Սովորողները ճանաչում են մակբայները, գիտեն սահմանումը, խոսքիմասային առանձնահատկությունները, կարողանում են դասակարգել և կիրառել խոսքի մեջ:</b></p>

<p>4-րդ շաբաթ</p> <p>5</p>	<p>Կապ. տեսակները և կիրառությունը:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• հարցուպատասխան,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ նյութական իմաստից զուրկ խոսքի մասերի մասին, ներկայացնել կապի խոսքիմասային առանձնահատկությունները և նրանց կիրառությունը խոսքի մեջ:</p> <p><b>Քննարկվող հարցերը</b></p> <p>ա)գաղափար կապի մասին, բ)կապերի տեսակները, գ)կապերի խնդրառությունը: դ)ձևաբանական-շարահյուսական եռաձևություններ(վրաս//ինձ վրա//իմ վրա,վրադ//քեզ վրա//քո վրա,մոտս//ինձ մոտ//իմ մոտ, մոտդ//քեզ մոտ, քո մոտ)</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Հանձին և հանձինս կապերի ճիշտ կիրառությունը</p>	<p><b>Մովորողները ճանաչում են կապերի երեք տեսակները, կարողանում են դասակարգել և ճիշտ կիրառել խոսքի մեջ:</b></p>
--------------------------------	----------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------

<p><b>4-րդ շաբաթ</b></p> <p><b>6</b></p>	<p>Հայ ժողովրդական բանահյուսություն. առասպել և էպոս:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• քննարկում,</li> <li>• տեսանյութի դիտում:</li> </ul> <p>Սովորողներին ներկայացնել բանահյուսության/ֆոլկլոր/ առանձնահատկությունները, նրա դերն ու նշանակությունը հայ գրականության զարգացման գործում: Խոսել բանահյուսական ժանրերի և առանձնահատկությունների մասին: Առասպելներները և մեր ազգային էպոսը՝ որպես բանահյուսության բացառիկ նմուշներ:</p>	<p>Կարդալ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը և հատված «Սասունցի Դավիթ» էպոսից:</p> <p>Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը</p>	<p><b>Սովորողները գիտեն՝ ինչ է բանահյուսությունը, ճանաչում են նրա ժանրերը և առանձնահատկությունները:</b></p> <p><b>Գիտեն էպոսի կառուցվածքը, գաղափարը, գրական մշակումները:Կարողանում են մեկնաբանել էպոսը և կատարել դատողություններ:</b></p>
<p><b>5-րդ շաբաթ</b></p> <p><b>7</b></p>	<p>Շաղկապներ. տեսակները և կիրառությունը:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ գրույց,</li> <li>• հարցուպատասխան,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ շաղկապների, նրա տեսակների և կիրառության մասին: <b>Քննարկվող հարցերը՝</b> ա)համադասական շաղկապներ, բ)ստորադասական շաղկապներ, գ)շաղկապների կազմությունը և կիրառությունը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ</p> <p>Նախադասությունների վերլուծություն ձևաբանորեն</p>	<p><b>Սովորողը ճանաչում է համադասական և ստորադասական շաղկապները, գիտի նրանց կազմությունը, կարողանում է ճիշտ կիրառել և կետադրել խոսքի մեջ:</b></p>
<p><b>6-րդ շաբաթ</b></p>	<p>Վերաբերական և ձայնարկություն:</p> <p><b>Գործնական</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• բանավեճ-քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> Գաղափար տալ վերաբերականների և ձայնարկությունների, նրանց ոճական առանձնահատկությունների</p>	<p>Հիշել բանաստեղծություններ, որոնք սկսվում են ձայնարկություններով:</p> <p>Նախադասության վերլուծություն:</p>	<p><b>Սովորողը գիտի , թե ինչու են ձայնարկություններն ու վերաբերականները դիտվում որպես վերաբերության խոսքի մասեր, ճանաչում են , կարողանում են դասկարգել, կիրառել խոսքի մեջ և կետադրել:</b></p>

8	<p>պարապմունք /2 ժամ/</p>	<p>մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) վերաբերականների տեսակները և արտասանական զուգաձևությունները,</p> <p>բ) խոսքի մեջ վերաբերականների դիրքը և կետադրությունը,</p> <p>գ) ձայնարկությունների տեսակները</p> <p>և հնչյունական-ձևաբանական զուգաձևությունները:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		
6-րդ շաբաթ  9	<p>Հայ գրականությունը 10-12-րդ դդ.</p> <p><b>Գրիգոր Նարեկացի</b></p> <p><b>Գործնական պարապմունք</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• քննարկում</li> <li>• տեսանյութի դիտում</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> սովորողներին գաղափար տալ 10-12-րդ դարերի գրականության մասին: Ներկայացնել Գրիգոր Նարեկացու կյանքը, գրական գործունեությունը, տաղերը, նրանց արդիական հնչերանգը: «Մատյան ողբերգության» պոեմի գաղափարը և համամարդկային հնչերանգը:</p>	<p>Անգիր սովորել «Մեղեդի ծննդյան» տաղը:</p> <p>Մամուլագրողների կատարմամբ լսել հատված «Մատյան ողբերգության» պոեմից:</p> <p>Տեսաֆիլմի դիտում</p>	<p><b>Սովորողը գիտի Նարեկացուն՝ որպես հայ վերածննդի սկզբնավորողի:</b></p> <p><b>Գիտի նրա գլուխգործոցի՝ «Մատյան ողբերգության» պոեմի դերն ու նշանակությունը հասարակության կյանքում և պոեզիայի մեջ :</b></p> <p><b>Անգիր գիտի փոքրիկ հատված պոեմից և «Մեղեդի ծննդյան» տաղը:</b></p>
7-րդ շաբաթ	<p>Շարահյուսություն. ուսումնասիրության առարկան, խնդիրները:</p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պատկերի դասախոսություն,</li> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• քննարկում:</li> </ul>	<p>Գրել մասնագիտության հետ առնչվող բառակապակցություններ/տերմիններ/:</p>	<p><b>Սովորողները գիտեն, թե որոնք են շարահյուսության ուսումնասիրության</b></p>



10	<p>Բառակապակցություն /կայուն և ազատ/:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Նպատակը`</b> գաղափար տալ շարահյուսության, նրա խնդիրների և նպատակների մասին: Ներկայացնել շարահյուսության և ձևաբանության կապը, բառակապակցությունը որպես նախադասության բաղադրիչ:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) Շարահյուսության նպատակները և խնդիրները,</p> <p>բ) շարահյուսության կապը ձևաբանության հետ,</p> <p>գ) բառակապակցության տեսակները,</p> <p>դ) կայուն և ազատ բառակապակցություններ:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>		<p>առարկաները և խնդիրները, գիտեն նախադասության սահմանումը, նրա կարևոր հատկանիշները, ճանաչում են բառակապակցությունները և նրանց տեսակները: Կարողանում են տարբերել բառակապակցությունները նախադասություններից, կայուն բառակապակցությունները` ազատ բառակապակցություններից:</p>
<p><b>8-րդ շաբաթ</b></p> <p>11</p>	<p>Նախադասություն. երկկազմ և միակազմ նախադասություններ:</p> <p>Նախադասության տեսակներն ըստ խոսողի վերաբերմունքի:</p>	<p><b>Տեսակը`</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• ինտերակտիվ զրույց,</li> <li>• դասախոսություն (ավանդական):</li> </ul> <p><b>Նպատակը`</b> գաղափար տալ նախադասության, նրա տեսակների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը`</b></p> <p>ա) նախադասությունը որպես խոսքի միավոր,</p> <p>բ) երկկազմ նախադասություններ,</p> <p>գ) միակազմ նախադասություններ,</p> <p>դ) նախադասություններն ըստ խոսողի</p>	<p>Գործնական զրույթուն` <b>Տեղեկանք:</b></p>	<p>Մովորողը ճանաչում է երկկազմ և միակազմ նախադասությունները: Գիտի միակազմ նախադասությունների տեսակները` դիմավոր միակազմ, անդեմ միակազմ և բառ նախադասություն: Մասնագիտական խոսքի առանձնահատկություններից ելնելով` կարողանում է ճիշտ կազմել միակազմ նախադասություններ և կետադրել:</p>

	<b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b>	վերաբերմունքի/պատմողական, հարցական, հրամայական, բացականչական/  <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		
<b>8-րդ շաբաթ</b>  <b>12</b>	Ներսես Շնորհալի  <b>Գործնական պարապմունք /2 ժամ /</b>	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• տեսանյութի դիտում:</li> </ul> <b>Նպատակը`</b> սովորողներին ներկայացնել Ներսես Շնորհալու կենսագրությունը, նրա ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը:  <b>Քննարկվող հարցեր</b> ա)Շնորհալին հասարակական գործիչ, բ)«Ողբ Եղեսիոյ» պոեմը, գ)Շնորհալու հանելուկները:	Անգիր սովորել Շնորհալու հանելուկներից: Տեսաֆիլմի դիտում	<b>Սովորողները գիտեն Ներսես Շնորհալու կենսագրությունը, ծանոթ են նրա տաղանդի առանձնահատկություններին, գիտեն «Ողբ Եղեսիոյ» պոեմի գաղափարական բովանդակությունը, պոեմի առանձնահատկությունները և պոեմը որպես աշխարհիկ թեմայով գրված եզակի գործ: Կարողանում են արտասանել հանելուկներից:</b>
<b>9-րդ շաբաթ</b>	Նախադասության տեսակներն ըստ կազմության. պարզ և բարդ նախադասություններ:	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• քննարկում:</li> </ul> <b>Նպատակը`</b> գաղափար տալ նախադասությունների կազմության մասին: <b>Քննարկվող հարցերը`</b>	Թեմայից բխող վարժություններ:	<b>Սովորողը տարբերում է պարզ և բարդ նախադասությունները: Գիտի պարզ նախադասության և բարդ նախադասության տեսակները: Կարողանում է ընդարձակել համառոտ</b>

13	Գործնական պարապմունք /2 ժամ /	ա)պարզ նախադասությունների տեսակները, բ)բարդ նախադասությունների տեսակները: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		նախադասությունները, ինքնուրույն կազմել պարզ և բարդ նախադասություններ:
10-րդ շաբաթ  14	Նախադասության անդամներ:Նախադասության գլխավոր անդամներ:  Գործնական պարապմունք /2 ժամ/	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <b>Նպատակը`</b> գաղափար տալ նախադասության անդամների մասին, ներկայացնել նախադասության գլխավոր անդամները: <b>Քննարկվող հարցեր</b>  ա)ենթակա. ենթակայի արտահայտությունը, բ)ստորոգյալ. ստորոգյալի կազմությունը/պարզ և բաղադրյալ/ <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>	Թեմայից բխող վարժություններ:  Բանավեճի թեմա` «Մերն է գոյության հանճարը միակ»:	Մովորողները ճանաչում են նախադասության գլխավոր անդամները` ենթական և ստորոգյալը, գիտեն սահմանումները, ճիշտ են ընկալում պարզ և բաղադրյալ նախադասությունները:Կարողանում են ինքնուրույն կազմել նախադասություններ` և` պարզ ստորոգյալներով, և` բաղադրյալ ստորոգյալներով:
10-րդ շաբաթ  15	Միխիթար Գոշ  Գործնական պարապմունք/2 ժամ/	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• տեսանյութի դիտում:</li> </ul> <b>Նպատակը`</b> սովորողներին ներկայացնել հայ իրավական մտքի պատմությունը: ա) Միխիթար Գոշի «Դատաստանագրքը», բ) Գոշի առակները:	Կարդալ Գոշի առակներից:  Փորձել գրել որևէ առակ: Տեսաֆիլմի դիտում	Մովորողները գիտեն Միխիթար Գոշի կենսագրությունը, նրա ստեղծագործությունների առանձնահատկությունները: Գիտեն «Դատաստանագրքի» դերն ու նշանակությունը հայ իրավական մտքի զարգացման պատմության մեջ, կարողանում են պատմել առակները և կատարել դատողություններ:

<p>11-րդ շաբաթ</p> <p>16</p>	<p>Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը և համաձայնությունը:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• հարցուպատասխան,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ ենթակայի և ստորոգյալի կապակցման և համաձայնության մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը դեմքով և թվով,</p> <p>բ) հավաքական գոյականների համաձայնությունը,</p> <p>գ) բաղադրյալ ստորոգյալի և ստորոգելիական վերադրի համաձայնությունը:</p> <p><b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p>	<p>Սովորողները ճանաչում են պարզ և բաղադրյալ ստորոգյալները: Կարողանում են տեքստի մեջ ճիշտ համաձայնեցնել ենթական և ստորոգյալը:</p>
<p>12-րդ շաբաթ</p> <p>17</p>	<p>Նախադասության երկրորդական անդամներ: Գոյականական անդամի լրացումներ <b>որոշիչ, հատկացուցիչ:</b></p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> սովորողներին գաղափար տալ նախադասության երկրորդական անդամների լրացումների մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>1. լրացումների տեսակները. գոյականական անդամի լրացումներ,</p> <p>ա) որոշիչ. արտահայտությունը և կետադրությունը,</p> <p>բ) հատկացուցիչ. արտահայտությունը և կետադրությունը:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Գործնական գրություն՝ <b>Տեղանքի զննության արձանագրություն</b></p>	<p>Սովորողը զիտի լրացումների տեսակները՝ գոյականական անդամի լրացումներ և բայական անդամի լրացումներ: Ճանաչում է որոշիչը և հատկացուցիչը՝ որպես գոյականական անդամի լրացումներ: Կարողանում է կազմել նախադասություններ՝ հետադաս բազմակի որոշիչներով և հեռացած հատկացուցիչով, և կետադրել:</p>
<p>12-րդ</p>	<p>Հայ գրականությունը</p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p>	<p>Կարդալ Ֆրրիկի</p>	<p>Սովորողը ճանաչում է Ֆրիկին՝</p>

<p>18</p>	<p>13-14-րդ դարերում: <b>Ֆրիկ</b>  <b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն</li> <li>• քննարկում</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> սովորողներին ներկայացնել Ֆրիկ բանաստեղծին՝ որպես աշխարհիկ թեմաներով ստեղծագործողի: <b>Քննարկվող հարցեր՝</b> ա)Ֆրիկի կյանքը և գրական գործունեությունը, բ)Ֆրիկի ժամանակաշրջանը, գ)Ֆրիկի պոեզիայի լեզվական նյութը, դ)բարոյախրատական, սոցիալական և քաղաքական մոտիվները, ե)Ֆրիկի պոետիկական կուլտուրան: զ)Ֆրիկի ստեղծագործությունների արդիական հնչողությունը:</p>	<p>ստեղծագործություններից:</p>	<p>որպես 14-րդ դարի աշխարհիկ բանաստեղծի:  <b>Գիտի նրա ստեղծագործությունների գաղափարը, գեղարվեստական արժանիքները:</b>  <b>Կարողանում է ինքնուրույն վերլուծել նրա գործերը :</b></p>
<p>19</p>	<p>13-րդ շաբաթ</p> <p>Գոյականական անդամի լրացում. <b>բացահայտիչ:</b>  <b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ բացահայտիչի և նրա տեսակների մասին: <b>Քննարկվող հարցերը՝</b> ա)բուն բացահայտիչ, բ)մասնական բացահայտիչ, գ)կոնկրետացնող պարագայական բացահայտիչներ: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:  Թեստային աշխատանք:</p>	<p><b>Սովորողը ճանաչում է բացահայտիչ բոլոր տեսակները, գիտի նրանց առանձնահատկությունը, կարողանում է ինքնուրույն կազմել նախադասություններ և կետադրել:</b></p>

<p>14-րդ շաբաթ</p> <p>20</p>	<p>Բայական անդամի լրացումներ: <b>Խնդիրներ և պարագաներ:</b></p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում,</li> <li>• բացատրում,</li> <li>• ինտերակտիվ զրույց:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ խնդիրների, պարագաների և նրանց տեսակների մասին: <b>Քննարկվող հարցեր՝</b> ա)պարագաները և նրաց արտահայտության ձևերը, բ)խնդիրների տեսակները և նրանց տրվող հարցերը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b></p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p>	<p><b>Մովորողը տարբերում է բայական անդամի լրացումները՝ խնդիրները և պարագաները: Կարողանում է նախադասության մեջ ճիշտ կիրառել բայական անդամի լրացումները(պարագաների շարադասությանը և խնդիրների շարադասությունը):</b></p>
<p>14-րդ շաբաթ</p> <p>21</p>	<p>Նահապետ Քուչակ</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• տեսաֆիլմի դիտում:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> Նահապետ Քուչակը առաջին սիրերգակ բանաստեղծ: <b>Քննարկվող հարցեր՝</b> Հայրենիների առանձնահատկությունները և գրական մոտիվները. ա)սիրտ երգերը, բ)փիլիսոփայական-խրատական երգերը, գ)Պանդխտության երգեր:</p>	<p>Տեսաֆիլմի դիտում</p> <p>Անգիր սովորել Ն. Քուչակի հայրեններից:</p>	<p><b>Մովորողները գիտեն Քուչակի ստեղծագործության պոետիկական արժանիքները:</b></p> <p><b>Կարողանում են արտասանել և մեկնաբանել հայրեններից:</b></p>

<p>15-րդ շաբաթ</p> <p>22</p>	<p>Բազմակի տրոհվող լրացումների, միջանկյալ բառեր, կոչականներ:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ բազմակի տրոհվող լրացումների, միջանկյալ բառերի և կոչականի մասին:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) նախադասության անդամ չհանդիսացող միջանկյալ բառեր կամ բառակապակցություններ,</p> <p>բ) կոչականի դերը նախադասության մեջ/գործառական արժեքը/,</p> <p>գ) կոչականի գործածության յուրահատկությունները:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Թեստային աշխատանք:</p>	<p><b>Մովորողը խոսքի մեջ տարբերում է բազմակի տրոհվող լրացումները, միջանկյալ բառերը և կոչականները:</b> Գիտեն գրավոր խոսքի մեջ կիրառելու և կետադրելու կանոնները:</p> <p><b>Կարողանում են ճիշտ կետադրել համր բնագրերը:</b></p>
<p>16-րդ շաբաթ</p> <p>23</p>	<p>Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն:</p> <p><b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b></p>	<p><b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում,</li> <li>• բացատրում,</li> <li>• ինտերակտիվ զրույց:</li> </ul> <p><b>Նպատակը՝</b> գաղափար տալ բարդ նախադասությունների, նրանց տեսակների մասին: Առանձնացնել բարդ համադասական նախադասությունը՝ նշելով կառուցվածքային հատկանիշները:</p> <p><b>Քննարկվող հարցերը՝</b></p> <p>ա) Բարդ նախադասություն. կառուցվածքային-քերականական տարբերությունները:</p> <p>բ) բարդ համադասական նախադասություններ: Ընդհանուր ենթակայով և տարբերակա համադասական նախադասություններ:</p>	<p>Թեմայից բխող վարժություններ:</p> <p>Գրել բարդ համադասական կառույցի առած-ասացվածքներ, որոշել բաղադրիչ-նախադասությունների իմաստային հարաբերությունները:</p>	<p><b>Մովորողը կարողանում է տարբերակել պարզ և բարդ նախադասությունները, ճանաչում է բարդ համադասական նախադասությունը, գիտի բարդ համադասական նախադասության կառուցվածքային հատկանիշները:</b> Կարողանում է տեքստից դուրս գրել բարդ համադասական նախադասություններ և</p>

		գ)բարդ համադասական նախադասությունների բաղադրիչ- նախադասությունների կապակցման ձևերը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		կետադրել:
16-րդ շաբաթ	Սայաթ-Նովա.  Սայաթ- Նովան սիրո երգիչ	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում</li> <li>• տեսանյութի դիտում</li> </ul> <b>Նպատակը`</b> սովորողներին գաղափար տալ Սայաթ –Նովայի գրական գործունեության մասին:Սայաթ–Նովայի եռալեզու քնարը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b> ա)սոցիալական վիշտը, բ)սիրո երգերը, գ)խոհափիլիսոփայական երգերը:	Կարդալ Սայաթ- Նովայի ստեղծագործությունները: Անգիր սովորել «Դուն էն գլխեն իմաստունիս» ստեղծագործությունը: Փորձել դասակով կատարել որևէ երգ Սայաթ- Նովայի երգացանկից:	<b>Սովորողները ճանաչում են Սայաթ-Նովայի երգարվեստը:</b>  <b>Կարողանում են գեղեցիկ կարդալ և արտասանել Սայաթ- Նովայի ստեղծագործություններից:</b>
24				
17-րդ շաբաթ	Բարդ ստորադասական նախադասություն: Երկրորդական նախադասությունների բնույթը:	<b>Տեսակը`</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <b>Նպատակը`</b> սովորողներին գաղափար տալ բարդ ստորադասական նախադասության մասին: Ներկայացնել բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչները և նրանց կապակցման ձևերը: Գաղափար տալ երկրորդական նախադասությունների բնույթի վերաբերյալ: <b>Քննարկվող հարցերը`</b> ա)բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները` գլխավոր և երկրորդական նախադասություններ, բ)բաղադրիչ նախադասությունների կառուցվածքային ու իմաստային	Թեմայից բխող վարժություններ:  Պաշտոնական խոսքից դուրս գրել բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում բաղադրիչների կապակցումն իրականացվում է ստորադասական շաղկապներով և հարաբերական դերանուններով:	<b>Սովորողը գիտի բարդ ստորադասական նախադասության սահմանումը, ճանաչում է բարդ ստորադասական նախադասությունը, նրա բաղադրիչները և կապակցման ձևերը, կարողանում է որոշել երկրորդական նախադասության բնույթը: Կարողանում է տեքստից դուրս գրել բարդ ստորադասական նախադասություններ և կետադրել:</b>
25	<b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b>			



		տարբերությունները և նրանց շարահյուսական դերը, գ)երկրորդական նախադասությունների բնույթը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		
18-րդ շաբաթ  26	Դերբայական դարձված: Դերբայական դարձվածների շարահյուսական գործառույթը և կետադրությունը՝ կախված դիրքից:  <b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b>	<b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասախոսություն,</li> <li>• քննարկում,</li> <li>• հարցուպատասխան:</li> </ul> <b>Նպատակը՝</b> գաղափար տալ դերբայական դարձվածի մասին: <b>Քննարկվող հարցերը՝</b> ա)դերբայական դարձվածի շարահյուսական գործառույթը, բ)տրոհվող դերբայական դարձվածներ. կետադրությունը: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>	Թեմայից բխող վարժություններ:  Գործնական գրություն՝ <b>Առարկայի զննության արձանագրություն</b>	<b>Մովորողը ճանաչում է այն դերբայները, որոնցով ձևավորվում են դերբայական դարձվածներ, գիտի՝ ինչպես են ձևավորում և հատկապես որ դերբայներով են ձևավորվում տրոհվող դերբայական դարձվածներ:</b>  <b>Կարողանում է ինքնուրույն կազմել դերբայական դարձվածներով նախադասություններ և կետադրել:</b>
18-րդ շաբաթ	Ուրիշի խոսք: Ուրիշի ուղղակի խոսք:  <b>Գործնական պարապմունք/2 ժամ/</b>	<b>Տեսակը՝</b> գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում,</li> <li>• բացատրում,</li> <li>• ինտերակտիվ գրույց:</li> </ul> <b>Նպատակը՝</b> գաղափար տալ ուրիշի խոսքի, նրա տեսակների, կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Ներկայացնել հեղինակային նախադասության դերը, դիրքը և կետադրությունը: <b>Քննարկվող հարցերը՝</b> ա)ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք, բ)ուղղակի խոսքի տեսակները՝ ասացական և ներքին կամ մտածական, նրանց	Թեմայից բխող վարժություններ:  Գրել այլաբանական իմաստ ունեցող ժողովրդական պատրաստի հակիրճ իմաստուն խոսքեր, բացատրել գործառական արժեքը:  Գրել ստեղծագործական շարադրություն՝ «Ո՞վ է մեղավոր» վերնագրով:	<b>Մովորողը ճանաչում է ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերը, գիտի ուրիշի խոսքի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները:</b> <b>Կարողանում է ինքնուրույն կազմել ուրիշի ասացական և ներքին(մտածական) խոսք և կետադրել:</b>

27		իմաստակառուցվածքային տեսակները: գ) հեղինակային նախադասության, կապակցող բառեր: <b>Քննարկվող հարցերի ամփոփում:</b>		
	54 ժամ			